

Անահիտ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՐԿՈՒ ՀԱՆՃԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԲԱՅՐՈՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ

Աստուծոյ հետ խօսելու միակ լեզուն հայերէնն է:
Հայերէնը հարուստ լեզու է, լիովին պարունակում է
մարդկային ձայների բոլոր հնչիւնները:
Ջորջ Բայրոն

Բայրոնը բազմաթափառ և բազմաչարչար իր կյանքի ընթացքում մի օր Վենետիկի մոտ, մի կղզում, հանդիպում է թուրքական բնակալությունից փախած և այնտեղ մշտական բնակության համար հաստատած մի խումբ հայերի: Այդ կղզին գտնվում է Վենետիկի հարավային կողմում, և 12-րդ դարի երկրորդ կեսին անվանվել է Սբ Ղազար, 13-րդ դարից հայտնի է դարձել որպէս Հայոց Տուն: Սակայն այն ավելի հռչակվում և հայտնի է դառնում, երբ Մխիթար Մեքաստացին իր 11 աշակերտներով հաստատվում է այստեղ, ստեղծում Մխիթարյանների միաբանությունը՝ հոգևոր կարգի մի հիմնարկություն, 1717թ. սեպտեմբերի 8-ին: Այդ օրից այն դառնում է հայ լեզվի, գրականության և մշակույթի ուրույն կենտրոն, որը աշխարհին ներկայացնում է հայ ժողովրդի պատմությունն ու պայքարը:

Անգլիական խավարամուլներին մերկացնող և օսմանյան բնակալության տակ խոշտանգված ժողովուրդների պաշտպան բանաստեղծը չէր կարող անտարբերությամբ անցնել այդ նույն բնակալության տակ տառապող հայ ժողովրդի կողքով: 1816թ. նոյեմբերի 11-ին, ժամանելով Վենետիկ, Բայրոնը հրապարակում է Սբ Ղազարի Հայկական Վանքով և միաբանությամբ: «Այդ ժամանակ ուրիշ ճամփորդների նման ես էլ խիստ հետաքրքրվում էի «Սբ Ղազարի մենաստանի ընկերությամբ», - գրում է նա:¹ 1816թ. դեկտեմբերի 1-ին տարագիր բանաստեղծը, գոնդով նստած, դիմում է դեպի Սբ Ղազար կղզին: «Դեկտեմբերի 1-ին մեծահռչակ և աշխարհաքարոզ անգլիացի բանաստեղծ Lord Byron-ը, որի գրվածքները ոսկու արժեք ունեին, այցելության եկավ մեր վանքը... Նա աշխույժ, ուրախ բնավորությամբ և կրակոտ աչքերով մի երիտասարդ էր. թեև կաղ էր մի ոտքից, բայց գեղեցիկ էր դեմքով», - գրում է Հ. Ավգերյանը իր «Ինքնապատում օրագրության» մեջ:²

Սբ Ղազարում մի ամբողջ հետաքրքիր աշխարհ է բացվում Բայրոնի համար: Նրան դիմավորում են Ս. Սումայանը, Հ. Ավգերյանը և այլ վանականներ:

Վարդապետ Հարություն Ավգերյանի պաշտոնն է եղել ընդունել և ուղեկցել կղզի այցելած հյուրերին: Ավգերյանը Բայրոնին առաջնորդում է վանքի գրադարան: Նրան ցույց են տրվում մագաղաթյա թանկարժեք նմուշներ հայ հին գրչագրերից, այդ թվում նաև՝ Մլքե թագուհու պատմական նշանավոր ավետարանը, ինչպես և հազվագյուտ թարգմանություններ հունարեն կորած բնագրերից, ասորերենից և պարսկերենից: Բայրոնը ծանոթանում է հայ բանաստեղծության, նկարչու-

¹ *Ղաշտենց Խ.*, *Բայրոնը և հայերը*, Եր., 1959, էջ 38:

² *Նույն տեղում*, էջ 41:

թյան և ճարտարապետության հատընտիրներին: Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 2-ի վաղ առավոտյան, Բայրոնը նորից է գալիս: Նա այցելում է վանքի տպարանը և Ավգերյանի հետ երկար զրուցում է հայ պատմության և մատենագրության շուրջ:

Զրույցի վերջում Բայրոնը խնդրում է Ադոնց արքահորը և վարդապետ Ավգերյանին թույլ տալ իրեն բնակվել վանքի մեջ՝ հայերեն սովորելու և հայ մշակույթին ավելի հանգամանորեն ծանոթանալու համար: Սակայն հայտնի է, որ Ադոնց արքահայրը մերժել է նրան վանքում բնակվել՝ վախենալով այդ այցելության քաղաքական բնույթից. Բայրոնը, հայտնի բանաստեղծ լինելով հանդերձ, քաղաքական խոշոր դեմք էր՝ տարագրված Անգլիայից:

Մերժելով ըմբոստ բանաստեղծին կողմում բնակվել՝ վանականները միաբերան խոստանում են ամեն հարմարություն տրամադրել նրան իրենց վանք հաճախելու, հայերեն սովորելու և հայ մշակույթին մոտիկից ծանոթանալու համար:

Երկօրյա այցելության տպավորությունն այնքան խորն էր, որ Բայրոնը համաձայնում է վանահոր առաջարկին: Նա գոհ էր տեսածից և լսածից: Նրա վրա հատուկ տպավորություն է թողնում վանականներից մեկը՝ Հարություն Ավգերյանը, որը քառասունն անց, կորովի դեմքով, կրակոտ աչքերով, սև մորուքով և հրաշալի ձայնով մեկն էր: Այդ ամբողջ ընթացքում նա էր առաջնորդել մեծ բանաստեղծին: Հայրենասեր և զարգացած այս մարդը, հայերենից բացի, գիտեր մի քանի հին ու նոր լեզուներ՝ հունարեն, լատիներեն, եբրայերեն, ֆրանսերեն, իտալերեն, անգլերեն, հունգարերեն և գերմաներեն: Հնուտ լեզվաբան էր և թարգմանիչ: Նա է հայերեն թարգմանել Միլտոնի «Դրախտ կորուսյալը», Լամբրոնացու «Ճարտասանություն»-ը և Շնորհալու «Հավատով խոստովանիմ»-ը առաջինը հնչեցրել իտալերեն և այլ լեզուներով:

Ավգերյանը միաժամանակ երևելի պատմաբան էր, անգիր գիտեր Խորենացու, Եղիշեի և մյուս նշանավոր մատենագիրների գործերը: Պատրաստակամ էր որպես ուսուցիչ և արժանապատիվ իբրև վանական: Հենց նա էլ, հուրախություն Բայրոնի, դառնում է նրա հայերենի ուսուցիչը:

«Հայր Պասկալ» (Padre Pascual) է անվանում Բայրոնն իր ուսուցչին, Ավգերյանը նրան փառաբանելով անվանում է խենթ:

Վանականները հայերեն դասերի համար Բայրոնին հատկացրել էին Գրչագրաց կամ Փոքր մատենադարան կոչվող սենյակը, որի լուսամուտը նայում էր ծովին: «Եվ ահա այդ սենյակում, որից արևելքի հնության շունչ էր փչում, նա սկսեց պարապել հայոց լեզվով» (Յու. Վեսելովսկի «Բայրոնը Մխիթարյանների մոտ» Գիր և արվեստ):³

Դեկտեմբերի 9-ին Մըրրեին ուղղած նամակում Բայրոնը գրում է. «Սկսել եմ և առաջ եմ տանում իմ հայոց լեզվի ուսումը, որը ես հաղթահարում եմ ուժերիս չափով, հայոց Մենաստանում, ուր ես հաճախում եմ ամեն օր, դասեր առնելու մի գիտնական արեղայից և ձեռք եմ բերել մի շարք եզակի և օգտակար տեղեկություններ այդ արևելյան ժողովրդի գրականության և բարքերի վերաբերյալ: Նրանք

³ *Դաշտենց Խ., նշվ. աշխ., էջ 50:*

մի հաստատություն ունեն այստեղ՝ մի եկեղեցի և Վանք՝ 90 արեղաներով, որոնցից ոմանք շատ գիտուն և զարգացած մարդիկ են: Նրանք ունեն մի տպարան և մեծ ջանքեր են գործադրում իրենց ազգը լուսավորելու համար: Հայերենը (որ կրկին է՝ գրաբար և աշխարհաբար) ես գտնում եմ դժվար, բայց ոչ անհաղթահարելի (գեթ այդպես հույս ունեմ)».⁴

Հայերեն սովորելու շարժառիթը Բայրոնի բացատրությամբ չափազանց ուշագրավ է:

Դեկտեմբերի 5-ին Թոմաս Մուրին ուղարկած նամակում Բայրոնը Վենետիկից գրում է.

«Զբոսանքի կարգով ես ամեն օր հայերեն եմ սովորում հայոց Մենաստանում: Ես գտա, որ միտքս զբաղեցնելու համար մի դժվար աշխատանք էր հարկավոր ինձ: Սրանից ավելի դժվար զբոսանք ես չէի կարող գտնել այստեղ: Ես այն ընտրեցի, որ նրանով զբաղվելով՝ միտքս տանջեմ: Դա մի հարուստ լեզու է, այսուամենայնիվ, և կարող է մեծապես հաստուցել իրեն սովորողի նեղությունը: Ես ջանում եմ և պիտի առաջ գնամ, բայց չեմ երաշխավորի իմ դիտավորությունների կամ հաջողությունների համար»:⁵

Սակայն Բայրոնի հայերեն սովորելու հիմնական շարժառիթը պետք է որոնել այն բացառիկ մեծ սիրո մեջ, որ նա տածում էր դեպի աշխարհի ճնշված հնագույն ժողովուրդները:

Ավգերյանի հիշատակությամբ, Բայրոնը բուռն ցանկություն է հայտնել սովորել հայերեն՝ հայ բանաստեղծության ընտիր հատվածները կարդալու համար:

Քերականական կանոններին զուգընթաց, Ավգերյանը իր անգլիացի աշակերտին հրամայում էր կտորներ հայ հին և միջնադարյան գրականությունից: Հայերենից բացի, նա ավանդում էր հայոց պատմության դասեր, որը Բայրոնն ունկնդրում էր լարված ուշադրությամբ՝ աչքը երկար պահելով Արարատի վեհատեսիլ պատկերին:

Դեկտեմբերի 24-ին Թոմաս Մուրին ուղղած իր նամակում Բայրոնը գրում է. «Կյանքս շատ կանոնավոր ընթացքի մեջ մտավ: Առավոտները գոնդոլով գնում եմ հայերեն կադալու (hobbie) Մբ Ղազարի միաբանության արեղաների հետ և օգնելու նրանցից մեկին, սրբագրելով անգլերենի բաժինը մի անգլո-հայ քերականության, որ նա այժմ հրատարակում է»:⁶

Մարտի 25-ին Բայրոնը գրում է Սըրրեին. «Հայերեն քերականությունը լույս տեսավ, այսինքն՝ միայն մեկը, իսկ մյուսը դեռ ձեռագիր վիճակում է»:⁷

Բայրոնը հայերեն է սովորել մի ամբողջ ձմեռ:

«Եվ նա սկսեց վանք հաճախել հիսուն օր շարունակ ու սովորում էր օրական երկու-երեք ժամ և, մանավանդ, զրույցներ էր ունենում սփոփանքի համար» (Ավգերյան «Ինքնապատում օրագրության»):⁸

⁴ *Ղաչտեկնց Խ.*, նշվ. աշխ., էջ 50:

⁵ *Նույն տեղում*, էջ 52:

⁶ *Նույն տեղում*, էջ 54:

⁷ *Նույն տեղում*, էջ 58:

Ավգերյանի և Բայրոնի մտերմությունը օրավուր խորանում էր: Բայրոնի հետաքրքրությունը և համակրանքը հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի հանդեպ սկիզբ դրեցին մի համագործակցության, որը տվեց իր արգասիքը. 1817թ. առաջին անգամ լույս տեսավ անգլո-հայ քերականության դասագիրքը, որ կոչվում էր «Քերականություն Անգլիական և Հայերեն»: Նրա ճակատին՝ ներսի կողմից, անգլերեն և հայերեն գրված էր. «Որչափ լեզուս գիտե ոք խոսիլ, այնչափ անգամ ևս մարդ է նա»: 1817թ. հունվարի 2-ին Բայրոնը Սըրբրեին գրում է. «Մի ուրիշ ծրարով քեզ եմ ուղարկում Անգլո-հայ քերականությունից մի քանի թերթեր, հայերի օգտագործման համար, որը ես քաջալերեցի և որի հրատարակությունը արդարև աջակից եղա (դա ինձ վրա նստում է միայն 1000 ֆրանսիական լիվրե)»:՝⁹ Սա հաստատում է, որ Բայրոնը ոչ միայն հայերեն է սովորել, այլև իր ծախսով տպագրել է վերոհիշյալ Անգլո-հայ քերականության դասագիրքը: Ավգերյանը առաջաբանի վերջում շնորհակալություն է հայտնում Բայրոնին. «... և լինել շնորհակալ երախտապարտ Միլորտին»:

Անգլո-հայ քերականությունը Բայրոնի և Ավգերյանի առաջին գրական համագործակցության արգասիքն էր:

Միացյալ ջանքերով ձեռնարկելով Անգլո-հայ քերականության դասագրքի հրատարակությունը հայերի համար՝ Բայրոնի առաջարկությամբ և քաջալերանքով նրանք միաժամանակ կազմում են հայ լեզվի քերականության դասագիրք անգլիախոս ուսանողների համար: Ավգերյանը գրում է. «Այա հաղորդեց կազմել նաև մեկ ուրիշ հայերեն և անգլերեն քերականություն հօգուտ իր ազգակիցների»:՝¹⁰ Այս աշխատությունը լույս է տեսնում 1819թ.-ին, ապա 1832թ.-ին և կոչվում է «Քերականություն հայերեն և անգլիական» («A Grammar Armenian and English»): Բայրոնի նպատակն է եղել իր եվրոպացի հայրենակիցներին ուսուցանել աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի լեզուն, հետաքրքրություն արթնացնել նրանց մեջ դեպի հայերի հայրենիքը և մշակույթը: Այդ նպատակով դասագրքի ճակատին իբրև բնաբան գրված է Օննոց գրքի խոսքը.

«Եւ նստաւ տապանն ... ի լերինս Արարատայ»:

Դասագրքի բաժիններից մեկում բնագրի հետ զետեղված են մի շարք թարգմանություններ, այդ թվում և Բայրոնի՝ հայերենից կատարած թարգմանությունները:

Թե բարեկամության ինչպիսի մտերմություն էր հաստատվել Բայրոնի և իր ուսուցչի միջև, երևում է 1818թ. հունվարի 27-ին Սըրբրեին գրած նամակից. «Իմ հայրը, այսինքն՝ իմ հայ Հարություն հայրը, մեր Մենաստանի բոլոր մյուս հայերի անունից հղում է քեզ հարգալից ողջույններ»:՝¹¹

Կազմված և հրատարակված էր Անգլո-հայ քերականությունը: Լույս էր տեսել Հայ-անգլերեն առաջին քերականության դասագիրքը: Ասպարեզ եկավ

⁸ *Դաշտենց Խ.*, նշվ. աշխ., էջ 59:

⁹ Նույն տեղում, էջ 61:

¹⁰ Նույն տեղում, էջ 67:

¹¹ Նույն տեղում, էջ 71:

Անգլո-հայ բառարանը: Չնայած բառարանի փաստական հեղինակը համարվում է Հարություն Ավգերյանը, խիստ զգալի է մեծ բանաստեղծի մասնակցությունը այդ գործում ևս: Բառարանը տպագրվեց 1821թ.-ին: Այն ունի անգլերեն ընդարձակ առաջաբան, հայերեն առաջաբանից զատ, որում կարդում ենք. «... մենք հայարտ ենք անվանելու Լորդ Բայրոնին՝ ամենասկանալորը անգլիական բանաստեղծներից, անգամ անգլիական բանաստեղծության ներկա հրաշալի դարում, որը մեր միջև հայերեն սովորելուց հետո դրդեց մեզ հրատարակել անգլերեն լեզվի համառոտ մի քերականություն և նույնպես օգնեց մեզ կազմելու հայ լեզվի մի անգլերեն քերականություն իր հայրենակիցների օգտագործման համար»:¹²

Այնուհետև Բայրոնը Վենետիկի Սբ Ղազար կղզում ծանոթացել է հայերեն Աստվածաշնչին, նույնիսկ թարգմանություններ է կատարել դրանից (այն մասերը, որ պակասել են անգլիական Bible-ում): 1818թ. մարտի 31-ին նա գրում է Ջոն Սըրրեին. «Գրել եմ արդյոք քեզ, որ ես թարգմանել եմ առաքելական թղթերից երկուսը: Դա մի թղթակցություն է Սբ Պողոսի և կորնթացոց միջև, որ մեր թարգմանության մեջ գոյություն չունի, այլ կա հայերենում, և, ըստ իս, խիստ վավերական է: Ես այն թարգմանել եմ Սբ Գրքի հատուկ անգլերենով»:¹³

Բայրոնի՝ հայերեն արձակից կատարած թարգմանությունները, թարգմանական վարժություններ լինելով հանդերձ, արտահայտում են մեծ բանաստեղծի բուն հետաքրքրությունն ու սերը դեպի հայ ժողովուրդը և նրա գիրն ու գրականությունը: Բայրոնը՝ որպես բանաստեղծ, մեծապես հետաքրքրվել է նաև հայ պոեզիայով: Չկարողանալով լրիվ հասկանալ մեր բանաստեղծական երկերը՝ նա խնդրել է իր ուսուցչին հայ բանաստեղծության ընտիր հատվածները հայերենից իտալերեն թարգմանել, որ ինքը կարողանա կարդալ դրանք: Ավգերյանի օրագրության մեջ ասված է. «Այս խնդրեց, որ իտալերեն թարգմանվի հայոց բանաստեղծությունների ընտիր հատվածներ ... որոնց մեջ նրան դուր եկավ Հովհաննիսի մասին Շնորհալու գրած հանձարեղ երգը»:¹⁴

Շատերն են փորձել գտնել Բայրոնի հայերով համաշխարհային լինելու պատճառները. «Նա (Բայրոնը) սիրում ու հարգում էր այն բոլոր ազգերին, որոնց սիրելի էր անկախության ոգին: Այս էր գուցե հայերի նկատմամբ ունեցած իր հիացմունքի բանալին, որովհետև նա գտավ նրանց մեջ մի ազգ, որին բնությունն ու ազգության կորուստը չէին կարող աղավաղել կամ ընկճել, մի ազգ, որը, հակառակ իր պարտության՝ անաղարտ է պահել իր ավանդույթների վեհությունը և իր հին համոզմունքների գեղեցկությունը»:¹⁵

Կազմելով Հայ-անգլերեն քերականության դասագիրքը՝ Ավգերյանը խնդրում է Բայրոնին մի առաջաբան գրել: Բանաստեղծը սիրով հանձն է առնում այդ գործը: Եվ ահա հրապարակ է գալիս Բայրոնի վերոհիշյալ նշանավոր Առաջաբանը, որը գրված է անկեղծ ու ջերմ շնչով: Այն քաղաքական կարևոր փաստա-

¹² Տե՛ս «Բառարան Անգլիական և Հայերեն»-ի անգլերեն առաջաբանը, Վենետիկ, 1821:

¹³ *Պաշտենկ Խ.*, նշվ. աշխ., էջ 81:

¹⁴ *Նույն տեղում*, էջ 87:

¹⁵ *Պաշտենկ Խ.*, նշվ. աշխ., էջ 88:

թուղթ է, որում հանճարեղ բանաստեղծն արտահայտել է իր հույզերն ու մտքերը հայոց լեզվի և հայ ժողովրդի մասին.

«Անգլիացի ընթերցողը հավանորեն պիտի զարմանա իմ անունը այսպիսի մի գործի հետ առնչված տեսնելով և գուցե ինձ, իբրև լեզվագետի, իմ արժանիքից ավելի դրվատի: Չուզենալով գիտակցաբար մեղսակից լինել այդպիսի մի պատրանքի, կարելոյն չափ համառոտակի պիտի բացատրեմ իմ անձնական դերը սույն գործի հորինման մեջ և այն դրոշապատճառները, որ ինձ դեպի այն մղեցին: Երբ 1816թ. Վենետիկ հասա իմ միտքն այնպիսի վիճակի մեջ էր, որ կարիք էր զգում ծանր զբաղումի և այնպիսի մի զբաղումի, որ իմ երևակայության համար քիչ ասպարեզ թողներ և հետապնդումիս համար բավականաչափ դժվարություն հարուցեր: Այդ ժամանակ ես էլ մյուս ուղևորների նման խիստ հետաքրքրվում էի Մ. Ղազարի մենաստանի հասարակությամբ, որը կղերական հաստատության մեջ միավորում էր բոլոր առավելությունները առանց յուրացնելու դրա մոլություններից որևէ մեկը: Կացարանի մաքրությունը, հանգստավետությունը, արեղաների ազնվությունը, բարեկրթությունը և եղբայրական առաքինությունները անտարակույս պետք է համոզեն աշխարհիկ մարդուն, թե «կա մի ուրիշ և ավելի լավ բան» նույնիսկ այս կյանքի մեջ:

Այս մարդիկ քահանաներ են մի հարստահարված և ազնվական ազգի, որը հրեաների և հույների նման տարագիր և ստրուկ է եղել առանց առաջինների պես խստասիրտ կամ վերջինների պես գերի դառնալու: Այս ժողովուրդը հարստացել է առանց վաշխառության և վաստակել է ամեն պատիվ, որ կարող են գերության մեջ վաստակել առանց խարդախության: Բայց նրանք, այնուամենայնիվ, երկար ժամանակ գրավեցին իրենց բաժինը «Գերության Տան» մեջ, որ վերջերս բազմապատկել էր իր անթիվ օթևանները:

Գուցե դժվար կլինեք որևէ այլ ազգի տարեգրությունները գտնել ավելի նվազ արատավորված ոճիրներով, քան հայոց, որոնց առաքինությունները խաղաղասիրտության արգասիք են, իսկ թերությունները՝ ճնշման հետևանք: Սակայն ինչպիսին էլ եղած լինի նրանց ճակատագիրը, - իսկ դա անցյալում դառն է եղել, - ինչպիսին էլ լինի նա ապագայի մեջ, նրանց երկիրը հավետ պիտի մնա որպես աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը, և թերևս միայն նրանց լեզուն կարիք ունի ավելի շատ ուսումնասիրվելու, ավելի գրավիչ դառնալու համար: Եթե Մ. Գիրքը ուղիղ ըմբռնենք, Հայաստանի մեջ էր, որ զետեղված էր դրախտը, Հայաստան, որ Ադամի սերունդների չափ նույնքան թանկ վճարեց իր հոգու վաղանցուկ մասնակցության համար այն մարդու երջանկությանը, որն իր փոշուց էր ստեղծված: Հայաստանի մեջ նախ ջրհեղեղը տեղաց և ապա աղավնին հանգչեց: Բայց կարելի է ասել, թե դրախտի անհետացման հետ սկսվեց նաև այս երկրի տարաբախտությունը, որովհետև թեպետև երկար ժամանակ նա եղավ մի գորավոր թագավորություն, բայց հազիվ երբեք անկախ մնաց. և՛ պարսից սատրապները, և՛ թուր-

քական փաշաները հավասարապես անապատ դարձրին այն երկիրը, ուր Աստված ստեղծել էր մարդուն ըստ իր հատուկ պատկերի»:¹⁶

Բայրոնն այս Առաջաբանը ներկայացնում է Ավգերյանին, բայց Մխիթարյանները հրաժարվեցին այն տպագրելուց քաղաքական նկատառումներից ելնելով: Բայրոնը ազդեցիկ ուժ էր դարձել Եվրոպայում: Նրա ամեն մի անգույշ խոսքը (նա երգիծել էր թուրքերին և պարսիկներին) կարող էր Մենաստանի խաղաղությունը վրդովելու պատճառ դառնալ: Նրան առաջարկում են ավելի «անվնաս» առաջաբան գրել Հայ-անգլերեն քերականության համար: Նա խոստանում է և, Ավգերյանի պատմաձի համաձայն, այլևս դադարում է Հայոց կղզի հաճախելուց:

«Դուք վախենում եք խիստ կարծիք տալել ձեզ ճնշողների մասին: Ստրուկնե՛ր և վախկոտնե՛ր, դուք արժանի եք բիրտ իշխանավորների: Դուք արժանի չեք այն մեծ ազգին, որից ծագում եք», - գոչել է նա Մխիթարյան հայրերի երեսին:¹⁷

Այդուհանդերձ, լռող Բայրոնի Առաջաբանը այդ օրերում մի ուժգին անհագանգ էր Եվրոպայի մեջ՝ մեր ազգի զարթոնքին ու դատին նվիրված: Նրանով Բայրոնը ասպարեզ էր իջնում որպես Հայաստանի և հայ ժողովրդի ազատության մեծ ջատագով:

Թումաս Մուրը այս Առաջաբանը գտավ բանաստեղծի թղթերում և հրապարակեց նրա կենսագրության մեջ, որտեղից էլ թարգմանվեց ու տարածվեց ամբողջ աշխարհում, գրեթե բոլոր քաղաքակիրթ լեզուներով:

Առաջաբանը գրված էր անգլերեն լեզվով, քանի որ Բայրոնն այնքան չէր սովորել հայերեն, որ կարողանար իր վերոհիշյալ առաջաբանը շարադրել հայերենով, բացի այդ նրա նպատակն էր անգլիացիներին հասու դարձնել այն, կցել իր հայրենակիցների համար կազմած Հայերեն-անգլերեն քերականության դասագրքին:

Թեպետ Բայրոնն Առաջաբանի կապակցությամբ գծոված էր Մխիթարյանների հետ, Հունաստան մեկնելուց առաջ նա այցելել է Մբ Ղազար կղզի: Սրտառույշ է եղել նրա հրաժեշտը իր հայ բարեկամներին: Բանաստեղծի մեկնումից հետո երկու ծերերը՝ «հայր Սոմայանը և հայր Ավգերյանը, իրարու երես նայեցան... մեկնած էր ան, զոր տարիներով սիրած էին իրենց անառակ տղուն պես. ան պիտի մեկներ դեպի Արևելք... և երկուքի ալ աչքերեն գույգ մը արցունքի կաթիլներ գլորեցան, ու տղու պես լացին»:¹⁸

Կղզու հայ բնակիչները սիրով են պահպանում Բայրոնին հիշեցնող և նրա անվան հետ կապված բոլոր մասունքները՝ Բայրոնի փոքրիկ գրչահատը, պատից կախված նրա երիտասարդ հասակի նկարը, կղզու վրա մինչև օրս գոյություն ունեն մեծ բանաստեղծի ձիթենիները, որոնք կոչվում են «Բայրոնյան ձիթենիք»: Այդ ծառերի տակ է երագել Անգլիայի մրրկաշունչ զավակը: Պահպանվում է նաև բանաստեղծի հայերեն ստորագրությունը վանքի այցելուների գրքում: Այդ ստորագրու-

¹⁶ *Դաշտենց Խ.*, նշվ. աշխ., էջ 91-93:

¹⁷ *Նույն տեղում*, էջ 95:

¹⁸ *Նույն տեղում*, էջ 109:

թյունը պահվում է ապակու տակ, այն սենյակում, որտեղ հայերեն է սովորել մեծ բանաստեղծը:

Թեև կարճ էր այդ երկու հանճարների՝ Բայրոնի և Հայոց լեզվի հանդիպումը, այնուամենայնիվ շատ խորը և անմոռանալի հետք է թողել հայ պատմության և գրականության մեջ: Եթե Բայրոնը գնահատեց և իր հարգանքի տուրքը մատուցեց Հայոց լեզվին անմիջապես, անարգել և հախուռն կերպով, ինչպիսին ինքն էր, ապա Հայոց լեզուն իր զիրկը բացեց մեծ անզլիացու պոեզիայի առաջ, և ժամանակի ընթացքում թարգմանական գոհարներ ծնվեցին հայերենով՝ շքեղ գեղեցկությամբ վերարտադրելով մեծ պոետի խոսքը:

ВСТРЕЧА ДВУХ ГЕНИЕВ: БАЙРОН И АРМЯНСКИЙ ЯЗЫК

___ *Резюме* ___

___ *А. Хачатрян* ___

В статье представлена связь великого английского поэта Дж. Байрона с армянским языком и армянами, описано его посещение Мхитарианского аббатства на острове Святого Лазаря в Венеции, его участие в создании и публикации англо-армянского и армяно-английского словарей.

Были использованы письма Байрона к Мррею и Муру, которые относятся к этому периоду.

Տեղեկություններ հեղինակի մասին

Խաչատրյան Անահիտ Մերյոժայի – Գյումրու Ջ. Բայրոնի անվան թիվ 20 դպրոց, E-mail:annettexxc@mail.ru